ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿՈՂՄԻՑ

Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտը 1960թ. սկսած իրականացնում է «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ» մատենաշարը: Արդեն հրատարակվել է 18 հատոր, որի հեղինակներն են եղել Հայաստանի և արտասահմանի ականավոր գիտնականները, արևելագիտության բնագավառի երևելի դեմքերը:

Մատենաշարը իր բնույթով եզակի երևույթ է ոչ միայն հայ իրականության մեջ, այլև իր նմանակը չունեցող հրատարակություն նախկին խորհրդային հանրապետություններում: Դա, ըստ էության, հայ արևելագիտության տարեգրությունն է, արժեքավոր պատմական հուշարձան, հայ արևելագիտական մտքի զարգացման բարձր մակարդակի խոսուն վկայությունը:

Մատենաշարի հատորներում արծարծված խնդիրները և հոդվածների պրոֆեսիոնալ բարձր մակարդակը նրան ապահովել են արժանի հեղինակություն միջազգային արևելագիտական շրջաններում:

Ներկա XIX հատորը, շարունակելով իր նախորդների լավագույն ավանդույթները, ունի մի կարևոր առանձնահատկություն: Այն ամբողջապես հանձնված է երիտասարդ արևելագետներին: Հատորում ներկայացված են ՀՀ ԳԱԱ Արևելագիտության, Պատմության, Գրականության, Հնագիտության և Ազգագրության ինստիտուտների, Երևանի Պետական Համալսարանի, «Հրաչյա Աճառյան» հումանիտար համալսարանի, Գյումրիի մանկավարժական ինստիտուտի և գիտական այլ կենտրոնների երիտասարդ արևելագետների և հայագետների հոդվածները:

Նման քայլի դիմելը՝ հատորն ամբողջությամբ երիտասարդների տնօրինությանը հանձնելը, կապված էր որոշակի ռիսկի հետ: Մատենաշարի մեծ հեղինակության պարագայում, հարց էր ծագում, կկարողանան արդյոք երիտասարդ արևելագետներն ապահովել այնպիսի մակարդակ, որն արժանի լինի դառնալու իր նախորդների օրինական ժառանգորդը:

Ծանոթությունը հասարում զետեղված հոդվածների հետ ընդհանուր առմամբ փարատում է այդ մտավախությունը, թեև մենք հեռու ենք այդ հոդվածները կատարյալ և ավարտուն համարելու մտքից:

Սակայն մի բան անվիճելի է և դա, թերևս, ժողովածուի ամենակարևոր արժանիքներից մեկն է: Հոդվածների հեղինակները համարձակորեն ոտք են դրել արևելագիտության դժվարին, սակայն խիստ պատվավոր բնագավառը: Նրանք իրենց հետ բերել են մտածելակերպի թարմություն, երևույթները նորովի լուսաբանելու գովելի միտում, լավատեղյակություն աղբյուրներին և մասնագիտական գրականությանը, այդ թվում՝ արևելյան և արևմտյան լեզուներով, բանավիճելու և իրենց տեսակետները հիմնավորելու անուրանալի ձիրք:

Մյուս կողմից, հատորը և դրանում զետեղված երեք տասնյակից ավելի հոդվածները, վկայում են արևելագետների պահուստային հուսալի ուժի առկայությունը մեր հանրապետությունում: Իսկ դա արևելագիտության որպես մեր հանրապետության համար ստրատեգիական նշանակություն ունեցող գիտական ուղղության շարունակականության ապահովման գրավականն է:

Գիտության բնագավառ է մուտք գործում արևելագիտության մի նոր կրթված սերունդ, որն առաջիկայում, առնվազն XXI դարի առաջին կեսում իր ուսերի վրա է կրելու արևելագիտության ծանր բեռը:

ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտը և ողջ հեղինակային կազմը իր խորին երախտագիտությունն են հայտնում «Արմէն և Բերսաբէ Ճերեճեան Հիմնադրամ-ԱՄՆ»-ի պրեզիդենտ մեծարգո Արսեն Ջերեջյանին սույն հատորի հրատարակության ծախսերը մեծահոգաբար ստանձնելու համար:

ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ

Տնօրեն՝ *պատմ. գիտ. դոկտոր, պրոֆ. Նիկոլայ Հովհաննիսյան*